

ԳԵՐՄԱՆԱՅԻ ԿՈՒԴԵՄԻՏ ԳԻՏՆԱԿԱՆԻՆ ԽՈՐԵՆԱՅԻՈՅ ՎՐԱՅ ԸՐԱՅ ԴԱՏԱՍՏԱՆԸ՝

Դիտողութեան՝ արժանաւոր կէտ մ'է այս ալ, որ եթէ ուղղուի Մովսէսի խորենացւոյ պատշաճ ժամանակագրութիւնն՝ ամբողջ պատմութեան նիւթն 'ի հիմանէ կր խախտի. օրինակի հաւասար. Պերոզ անուան պատճառն պարսիկ և հռովմէական պատերազմն է, զոր փոխանակ 162 թուին դնելու՝ 18 տարի առաջ կը ձգէ². և ինչ տեղե-

կութիւն որ կու տայ մեծին Միհրդատ, Միհրդատ որդւոյն վրայ (Ք. ժե-ժը), ճարտարութեամբ հիւսուած գեղեցիկ մանրանկար մ'է այն ձեռուրնիս հասած զանազան տեղեկութեանց՝ զոր ունինք Միհրդատ պերդամացւոյն, Միհրդատ Որդեան (Հերովդի) եղբորն և Ոլքեղայոս կապագովագւոյն վրայ³, նման օրինակներ ամեն էլի վրայ կը

1 Տես երես 43:

2 Պարթևագն պարսիկ թագաւորաց մէջ Պերոզ անուն վայ. 162 թուին հռովմէական գաւառաց վրայ վաղող պարթև թագաւորն՝ ըստ արգի ճշգրտած ժամանակագրութեան և ըստ գաւառական հեղինակաց՝ Արշակ ինչ կամ Վրդգէս Գ էր. ըստ որում խորենացին ալ կը վկայէ. « Պերոզ արքայ Պարսից 'ի Հռովմայեցւոց իշխանութիւնն արշաւեաց, ուստի և Պերոզ անուանեցաւ որ է յաղթող. քանզի յառաջ անուանիւր Վաղեղեստոս 'ի Յունաց լեզուն, թոյց թէ Պարսք զինչ կոչեն, ոչ գիտեմ »: Հռովմայեցւոց կողմանէ Վրդգէսի վրայ եկաւ Կուկիոս (ըստ խորենացւոյն Լուկիանոս) Աւրեղիոս Վերոս Կոմոգոս Անտոնինոս կէսար, որ Մարկոս Աւրեղիոս Անտոնինոս կայսեր եղբայրն էր և կայսերակից:

3 Դնենք այս տեղ խորենացւոյ պատման և գաւառական հեղինակաց մեզ տուած ծանօթու-թիւնքն գերմանացի հեղինակէն յիշուած անձանց վրայ:

Յորմէ ('ի Միհրդատայ) իբր թէ զերծեալ Պոմպէոս, որում ակն ոչ ունէր, և առեալ զՄաթաբ, և կալեալ զորդի նորա զՄիհրդատ, նստուցանէ զոր 'ի քաղաքին. և ինքն ոչ հետաժուտ լինի նմա, այլ ընդ Ատրիս 'ի Հրէա-ստան փութայ հասանել: Խորեն. Բ. ժե:

Սա զապտիկ հաշտութիւն խտեցեալ (Գաբիանու) ընդ Տիգրանայ, տայ զբռնորդին նորա զպատանին Միհրդատ, զորդին Միհրդատայ, զոր կալեալ էր Պոմպէի 'ի Մաթաբ, ասելով թէ գաղտ գնաց: Բ. ժը:

Ձայտու ժամանակաւ Թերահաւատութիւն լեալ Տիգրանայ 'ի պատանին Միհրդատ, չկարծելով ինքեան քուեր որդի, չտայ նմա մասն ինչ իշխանութեան, այլ և ոչ զիւր աշխարհն Վրաց: Եւ Միհրդատայ արհամարհութիւն կըրեալ 'ի քեռւոյն իւրմէ Տիգրանայ, ապստամբութեամբ անկանի առ Կեսար. իշխանութիւն գաւեալ 'ի նմանէ զՊերդեայ քաղաքի, զորովից օգնականութեան լինի Արգիպատոսի հօր Հերովդի, Կեսարու հրամանաւ: Սա չինչ զՄաթաբ ընդարձակագոյն և պայծառ լինուածովք, և անուանէ Կեսարիա 'ի պատիւ Կեսարու, Բ. ժը:

Արքեղայոս յարդեաց խաղաղութիւն կոչեցեալ՝ որդի էր հոմանուն զօրավարին Միհրդատայ, թէպէտ ասէր թէ արգի եմ մեծին Միհրդատայ. 'ի Պոմպէոսէ քրմակեալ կարգեցաւ ինչլոնեայ 'ի Կոմանա Պոնտոսի (68. Ն. Ք): Փեսայացաւ Բերինիկեայ դստերն Պաղոմեայ Աւլետի արքայի Նգիպատոսի և թագաւոր կոչեցաւ. այլ պարտեալ 'ի Գաբիանոսէ սպանաւ և Աւլէտ գարձաւ. յիւր ամուսն (53. Ն. Ք): Ուսէն Պոմ. Հռ. Ե. 39, 376, 415:

Միհրդատ Գ կամ Արշակ Ժ Գ պանզայի իւր շքրատա Գ զարքայ Պարթևաց (61. Ն. Ք): որ թէպէտ 'ի Գաբիանոս ապստամբ անկաւ 'ի թագաւորութենէն: իշխան հրաժանատար կացեալ միայն Մարաց արքարհին: անդրին 'ի մուսանգամ ապստամբն՝ յեղբորէն իւրմէ 'ի Հերովդէ 'ի մահ վարեցաւ (53. Ն. Ք): Ռոջն Ե. 413, 479:

Միհրդատ Պերգամոնի հարձորդի մեծին Միհրդատայ՝ անկաւ առ Կեսար և զօրավիդ եղէ նմա 'ի մարտին Ալեքսանդրիոյ որ յԵգիպտոս. և վասն օգնականութեան 'ի նմանէ չորրորդ ապաւ Գաղատիոյ և թագաւոր Կիմոնեանի վոսփորեայ կարգեցաւ, զոր յինքն ապա վտարել Զանացեալ զինու՝ մուսա 'ի մարտին (45. Ն. Ք): Ռոջն Պոմ. Զ. 19:

գանուին՝ Կրնանք րսել թէ խորենացին՝
ունեցած աղբիւրները զգուշութեամբ
չէ գործածած: Իսկ այս աղբերաց հա-
մար ինքն յայտնի ու կրկին և կրկին կը
խոստովանի թէ 'ի յունականէն միայն
առեր է, թէպէտ և Քաղզէացոց և
Պարսից գիւնատանց մէջ հայրենեաց
պատմութեան վերաբերեալ աւելի տե-
ղեկութիւնք գտնուէին: Այնպէս կը
խորշի յառասպելաց Պարսից՝ որ Աժ-
դահակայ պատմութիւնը պարզապէս
Սահակոյ բաղրատուննոյն յայտնի փա-
փազանցն համար կը պատմէ, և զայն
ալ 'ի վերջ զրոցն յաւելուած միայն
կարգելով: Խորենացոյն յունական աղ-
բերաց միայն առաւելութիւն տալուն՝
մեր գիմաց դրած պատճառներն, թէ
երախտապարտ գտնուինք Յունաց՝ ո-
րովհետեւ արեւելայց պատմութիւնը
յոյն լեզուով ալ կը կարդանք, թէ
Յոյնք մեծ ժառայութիւն ըրած են գի-
տութեան, և այլն, մեզի համար զար-
մանալիք են՝ այլ ոչ համոզեցուցիչ:
Իրեն բուն միտքն ուղիղ հասկանալու
համար՝ գիտնալու է որ 'ի ժամանակին
և յերկրին՝ ուր Մովսէս կը գրէր՝ պար-
սիկ և յոյն մատենագրութեան մէջ ե-
ղած հակառակ ոգին կրակապաշտու-
թեան և քրիստոնէութեան մէջ եղած
հակառակ ոգւոյն կը զուգործեանայ:
376 թուին ուրացողն Մերութան Հա-
յաստանի մէջ բոլոր ձեռքը ձգած գը-
րեանքն այրել տուաւ և յոյն լեզուին
ուսումը խստիւ արգելեց, որուն տեղը
պարսկականն պիտի անցնէր. որով
կարծեց անգոր ընել քրիստոնէական
ուսումն, որովհետեւ նոյն ժամանակի
հայկական եկեղեցին յոյն լեզու կը գործ-
ածէր: Գեռ Խոթն ալ որչափ որ Սա-
սանեանք յետ կեցան բռնի պարսկա-
կանութիւն 'ի Հայաստան մուցնէլէն՝
մեծ խնամքով կը զգուշանային որ չըլ-
լայ թէ Հայոց Յունաց հետ ունեցած
զրաւոր և եկեղեցական հաղորդակցու-
թիւնն՝ քաղաքական վերաբերութիւն
մ'ալ պատճառէ: Եւսմին 390 եղած
Հայաստանի բաժանման համեմատ՝
պարսիկ մարդպանք 'ի Պարսկահայս

խափանեցին յունադիտութիւնը, մինչ-
դեռ ասորի լեզուն իբրեւ ուսմանց լե-
զու ճանչուած էր. այս եղաւ պատճառն
որ մեծն Սահակ ալ 'ի սկզբան առ 'ի
չգոյէ յունական օրինակի աստուածա-
յունչ գրոց, ասորի օրինակաց վրայ
թարգմանեց սուրբ գիրքը: Սասանեանք
'ի տոյժ յոյն բարբառոյ ասորականին
նպաստելով, և այնպէս իրենց քրիստո-
նեայ հպատակաց Հռոմոյց հետ ունե-
ցած մերձուոր ընտանութիւնը խափա-
նելով իրենց քաղաքական տեսութեան
հաւատարիմ մնացին, և Մովսէսի ա-
տենէն 'ի վեր յաշողութեամբ յաղթա-
նակեցին յայնմ 'ի քնաս ուղղափառաց՝
նեստորականաց նպաստելով. ամեն
տեղ ուր որ նեստորականք առաջնու-
թիւն ունէին՝ տիրապետող լեզուն ա-
սորականն էր, հելլենականութեան
յետին նշմարքն անգամ անհետ եղան:

Այն վտանգն որ միշտ կը սպառնար
բաժնել զհայ քրիստոնէայս իր յունա-
կան մայր եկեղեցիէն՝ նոյնն սկզբնա-
ռիթ եղաւ ազգային մատենագրութե-
մը. հայ ժառանգաւորաց մէջէն քանի
մը գերահանճաղք ձեռք զարկին ազա-
տել ազգը ասորի լեզուին գերութե-
նէն՝ յատուկ տառից գիւտով և հայ-
կական գրաւոր բարբառոյ տեսողմամբ,
և իրենց կարեւոր երևցած գրոց բազ-
մաթիւ թարգմանութեամբք յունական
մատենագրութեան դանձէն՝ ըստ կա-
րելոյն իրենց ազգին համար հանգա-
նակել: Այս յունական գրոյցն՝ որ ան-
կէց վերջն իր բնիկ յատկութիւնն հայ-
կական մատենագրութեան վրայ սեւե-
ռեց, հակառակ է ոչ միայն հայ աղ-
գին բնաւորութեան՝ այլ և արդի պատ-
մութեան: Հայք ժազմամբ, լեզուով և
պատմութեամբ իրան կամ իրանական
էին, ազնուականաց կրթութիւնը պարս-
կական էր, և ինչուան հիմայ՝ կրօնից
զանազանութեամբ հանդերձ Հայա-
ստանի և սահմանակից աշխարհաց մէջ
նոյնը պահուած կը մնայ. շատ ատեն
չէ վրացի ազնուականաց հաւատարա-
պէս ընտանի և ծանօթ էին թէ պար-
սիկ հեթանոս առասպելք և թէ սուրբ

գրոց աւանդութիւնք, և եթէ այս բանս պարզապէս Շահերու ատեն Պարսից հետ ունեցած յարաբերութիւններէն չծագեցաւ, այլ յամենահին աւանդութեանց ալ, յայտնի է Մովսէս կաղանկատուացի Արուսիից պատմագրէն 'ի ժ. դարու, որ հայկական և նոր պարսիկ աւանդութիւններն արտաքոյ կարգի միութեամբ կ'առնու և կը ճառէ, Յայտնի էր թէ հայ տոհմիկն քրիստոնեայ ըլլալով չէր կրնար պարսիկ քաղաքաւարութենէն և յառասպելաց յետ կենալ, որք ազնուազարմ հայ ազգին պատմութեան հետ կենակից էին: Այս բանս պատրուակեալ հակառակութիւն մ'էր ընդ մէջ յունագրեցեալ մատենաւորութեան՝ որ յեկեղեցւոյ առնուած էր, և ընդ մէջ բնաւորութեան և աւանդութեանց՝ զոր ունէր հայ ազգին մեծ ազգեցութիւն ունեցող և մանաւանդ թէ մեծ և էական մասն: Հիմայ կրնանք խորենացւոյն միտքն իմանալ, Գրեց իր պատմութիւնը մեծագոր աշնուականի մը փափագանօք, Սահակայ Բագրատունւոյ, պէտք էր անոր և իր բարձր աստիճանին սիրելի և արժանաւոր բաները, իրանեան հիմանց վրայ հաստատուած հին Հայոց վէպերն և պատմութիւններն 'ի նմա ամփոփել և որպէս զի ստոյգ ազգային երկասիրութիւն մ'ալ ըլլայ՝ յեկեղեցւոյ միան:

Գամ հայ մատենագրութեան միայն գրողուած յունաձևութիւնն ներդաշնակութեամբ պատմագրութեան մէջ մտցնել ստիպուեցաւ փրիստոնիական խղճահարութեամբ կը խորշի 'ի հետեւ, նոս առասպելախառն պատմագրական նիւթոց, որոց հետքն արդէն յունական աղբերաց մէջ կը տեսնուէին, աղբիւրք՝ զորս և երկիւղած իսկ եկեղեցական հարք առանց խղճելոյ վկայութիւն բերեր և օրինակներ են. և պատմագրութիւնն ըստ արտաքին ձևոյն յունական պատմագրաց ձևոյն նոյն և նման ըլլաւ: Ահաւասիկ պատճառն, որով խորենացի գործոյն սկիզբը կը ստիպուի ժամուցանել թէ 'ի յունական աղբերաց միայն կ'ուզէ քաղել առնուլ:

Խորենացւոյն պատմութեան մէջ՝ ա. նոր բռնած ուղղութեան համեմատ՝ հայ թագաւորաց ուղիղ ժամանակագրութենէն յայտնի խոտորում մը կայ: Ամեն թագաւորը 7 տարի յետ ձգուած են. 385 թուին Մովսէս նորէն ուղիղ ժամանակագրութիւն ձեռք կ'առնու, 7 տարեկան միջոց մը Հայոց պատմութենէն դուրս ձգելով, Այս միջոցիս մէջ անցած զէպքերն 'ի Բուզանդայ գիտենք¹, վարազդատ թագաւորն ըզ. Մուշեղ Մամիկոն կտրիճ և արիասիրտ զիւցազն սպաննեց, որուն շնորհքն էր Հայաստանի Պարսից ձեռքէն ազա:

1 Աղգայն պատմագրաց մէջ լիայ քան զԲուզանդ. խառն գաղափարուած պատմագիր մը: Հնուց 'ի վեր արգելք չափազանց հայրենասիրութենէն մը թէ յայլ ինչ գաղտնի պատճառէ չարժեալ աղգայնից զԲուզանդ եպիսկոպէս և ստախոս բարձրագոյն: Հինգերորդ դարու մէջ Ղազար Փարպեցի կը ծանշայ Բուզանդայ եղած անիրաւութիւնը և ձեռք ալ կը զարնէ քանի մը սողով աշաղակներ և արգարացնել զանկալ: « Որում երկրորդ գրոցն, կ'ըսէ անուանեն զոմն պատմագիր կոչեցեալ Փաւստոս Բուզանդացի, և զման կարգերոցն առ 'ի նմանէ 'ի տեղեւ ուրեք՝ կարծեցին ոմանք բանք ինչ ոչ յարմար և դիպող, որպէս առաջնոյն շքաբարութիւն Արաթանգեղոսն կոչեցել, յերկուացեալ հարկաւորին շատը զայնպիսի անպարտաճ կարգեցեալ բնագրագրացւոյ ուստելոյ, Արգ. յայնպիսում քաղաքի և 'ի մէջ այնչափ բազմութեանն ուստելոյ վարժեալ այն Փաւստոս, այնպիսի ինչ արգելք անհաշիւս լսողաց բանս կարգեր 'ի պատմութեան իւրում. քան և մի յոյն: Ուստի և անհաւատայի իմում սկիւրամատութեանս կարծեցեալ գործն, ասեմ, թէ զուցէ այլ ոք յանդուգն և անհրաժանգ բանիւ լրբարար ձեռն արեւալ յիւր՝ քրեաց զինչ պէտս բոս կամի, և կամ զի ուրուք անկարեալ զիպողմ՝ այլարանեալ միասեց, և անուամբ Փաւստոսայն զիւրոյ յանդուգնութեան սխալանս համարեցաւ. Ժամկել: և այն յայտնի ցուցանի ամենայն հայեցողաց. քանիք են ոմանք 'ի Յոյնս, այլ մանաւանդ առաւել յԱմորիս (Կ)»: Գովելի անկողնասիրութեանց հանդերձ չի տարակուսիր թէ խիտ արաւառց փոփոխութիւնք եղած են հեղինակին սկզբնագիր գործոյն վրայ, և այսպիսի յանդիմութեանց օրինակներն գծաղղաբար չափ են աղգալ, յին պատմութեան մէջ: Թէպէտ և Ղազար Փարպեցւոյ նման մտանքները մը սկիչայտնի պաշտպանողական հեղինակութեան գէժ հաւասարադր ընդդիմացող հեղինակութիւն մը լուսնիք ձեռքերին, սակայն նոյն ընդգէժ ոգին անպատճառ պահէ հեղինակի մը գէժ՝ արգի քննադատից

տեղն: Անոր եղբայրն գլուխ քաշեց
քառասորէն և զինքն հալածեց Հայա-
ստանէն դուրս: Պապ թագաւորին դեռ
մանկահասակ որդիքն Արշակ Գ և Վա-
ղարշակ Բ թագաւորեցնելով՝ անոնց ա-
նուամբ իրրեւ մարդպան կը կառավա-
րէր: Ազնուական կողմնակցութեանց
մէջ եղած շարունակեալ ներքին զբո-
ւոտութիւնը դարձեցաւ զառաւել իկո-
մնակցութեան աչք զոցելով խաղաղա-
սէր զգուշութեամբ, Պարսից կողմանէ
գայնադրութեամբ մը ապահովցաւ, և
պարսիկ հեծելազոտնք մը (10000 ու-
գիք) իրեն առ ձեռն պատրաստ օգ-
նական առաւ: Իրեն վարչութեան մի-
ջոցն Հայոց պատմութեան համար լու-
սաւոր ժամանակ մ'իեղաւ, և թերեւ
Տրդատայ առջի սակաւածանօթ ժա-
մանակէն դուրս՝ քրիստոնէայ Հայա-
ստանի երբեմն վայելած ժամանակաց
մէջ ամենեղբայրիկն: Ուրացողն Մերու-
թան արծրունի թշնամութի՛ն ձգեց մէջ-
տեղ և զՄանուէլ Պարսից զէմ գըր-
գանց: Մանուէլ նպատակին դիրաւ
հասնելու համար յարձակեցաւ պար-
սիկ սպառազէն հեծելազոտին վրայ և
խորտակեց, որ Հայոց օգնական եկած
էին, Պարսից նոր հասած բանակ մ'ալ
լախախտեցաւ զաշտին վրայ, և Մա-

նուէլ անկէ վերջ ինքնազուրու տէր ե-
ղաւ, մինչդեռ Պարսիկք Բ Շապուհին
մահուանէ վերջ ծագած ներքին երկ-
պառակութեամբ յոգնած՝ եղած զնա-
սան չէին կրնար դարմանել: Թողուցին
զՄերութան իր գլխուն, որ երկար պա-
տերազմներ ըլլաւ Մանուէլի հետ, ուս-
կից սաստիկ յաղթուեցաւ և վերջապէս
պատերազմի մը մէջ ընկաւ մեռաւ:
Մանուէլ եօթն տարի խաղաղութեամբ
կառավարեց (378-385 թուին), և իր
անթիւ վիրաց վշտերով տազնապեալ
մեռաւ: Մեռնելու ատեն արշակունի
որերը Թէոդոսին յանձնեց: Բայոր այս
դիպաց անտեղեակ է խորենացի: ար-
դէն զՄերութան պատերազմին մէջ
Սմատ բազմատունի իշխանէն բրա-
նուած և նորորինակ սպանուած կը թո-
ղու (367): Սմատ շամիրուր տաք-
ցուցած և պսակաձե գլուխը գնելով
ըսաւ. « Պսակեմ՝ դքեզ, Մերութան,
քանզի 'ի խնդիր էիր թագաւորել Հա-
յոց, և ինձ ասպետիս պարտ է զքեզ
պսակել ըստ սովորական իշխանութե-
անց Հայրենեաց »: Գ. Լէ¹: ՉՄուշեղ
մի անգամ կը յիշէ Մովսէս անցողա-
բար, իր հուշակաւոր եղբոր Մանուէլին
և ոչ յիշատակը կայ. և որ մեծն է,
Մանուէլի աղջկան² որ Արշակ Գ թա-

խիստ օտար երևոյթ կը տեսնուի: Իրաւ լինէր կրնար ուրեմալ որ Բուզանդայ գործն լի է մեծա-
մեծ սխալներով, ժամանակաց շփոթութիւններով, և խիստ չափազանց պատմած դէպուց, զինուո-
րաց և պատերազմաց թուոց կարեւորութեան մէջ: Բայց պատմագիր մ'ալ գովելի յատկութիւն
ներն ունի, զորս մեր պատմագրաց շատերն կամ քիչ ունին կամ ամենեւին չունին: Ի Բուզանդ կը
գտնենք ժամանակին բարուց, սովորութեանց, կենաց, աւելորդապաշտութեանց և հայ գիտելու
զեւան դիրքահաւատութեան վրայ տեղեկութիւնք, կը սորվինք հեծեանոս Նոյստանի արարողու-
թիւնք, նախարարաց Թագաւորին հետ ունեցած կապն և վերաբերութիւն, աւատական վարդու-
թիւն՝ զոր Արշակունիք 'ի Նոյստան մտուցին, Գրիգորիութեան սկսին և անոր դժուարացող
յոտաւազմութիւնք, Սերգեյաց՝ Պետութեան հետ ունեցած յարաբերութիւն, վերջապէս ծայ-
րագոյն պատրիարքին արքունի իշխանութեան հետ ունեցած վերաբերութիւնք, և այլն, և այլն:
Տարակոյտ չկայ որ ազգին դիմաց Բուզանդայ համարմունք կորսնցըող գլխաւոր պատճառն է իր
անհամաձայնութիւնն մի և նոյն դիպաց մէջ Խորենացոյն հետ: Բայց ըստ արգի քննադատից եւ
նօթութեան՝ գիրքին չէ որոշելն թէ որով աւելի հաւատք ընծայելու է: Եղածսնք համբերու-
թեամբ ուղիք քննադատութեան վերջական վճռոյն:

1 « Եւ զԱւանայր Աղուանից արքայ, խոցոտեալ 'ի Մուշեղայ որդւոյ Վասակայ մամիկոննի,
հանին 'ի պատերազմն »: Խոր. Գ. Լէ:

2 Խորենացին կ'ըսէ Պապայ որդւոյ Արշա-
կայ և Վաղարշակայ համար: « Եւ առին իւրեանց
կանայս, Արշակ՝ զգուստր Բարկան Սիւնեաց
նահապետին, և Վաղարշակ՝ զգուստր Սահակայ
առաքելին, որ 'ի նմն ամի վախճանեցաւ »:
Գ. խա:

Իսկ Բուզանդ կ'ըսէ. « Եւ տայր սպարապետն
Մանուէլ զգուստր իւր Վարդապետուն կին
Արշակայ մահկանն արշակունւոյ, և փեսայ իւր
առնէր զնա: Առնէր Հայրանիս և եղբոր Խորին
Վաղարշակայ, և տայր նմա զգուստր առաքելին
Բազատունւոյ 'ի Սպեր գաւառ »: Ե. Գլուր.
խց:

գաւորին հարսնացեր էր, ուրիշ հայր մը կը տրուէ, և Համազասպ Մամիկոնեանի¹ վրայ խօսելու ատեն, որ պատ-
րիարքական տանը փեսայ եղած էր, կը լուռի թէ Համազասպ որդի է այն Մու-
շեղին², մինչդեռ ուրիշ տեղ և դիպաց մէջ³ ճիւղագրութիւն կ'ընէ Մովսէս, ինքն
նոյն մտածեմք որ այս դիպաց պա-
տահման ատեն Մովսէս զեռ մանուկ էր
կամ քիչ մ'ալ առաջ⁴ հաղիւ կրնանք
Մովսէսի այս նկատմամբ ունեցած տը-
գիտութեանն հաւատալ, ի Տարած Մա-
միկոնեանց գաւառն ծնած, սնած և
մեծցած մարդոյ մը համար բոլորովին
անհասկնալի բան մ'է. եթէ Մանուէլի
այնչափ յայտնի և հրապարակած անօթ-
քայլութիւնն, որ է Մերութանայ սպա-
նութիւնն, սխալմամբ այն Սահակայ
բագրատունւոյն տրուի՝ որուն ընծա-
յեց գիրքը, կրնանք ըսել որ ամեն լը-
ռութիւն դիտմամբ է, և խորհրդով կը
լանայ երկու տոհմիկ ցեղից մէջ նա-

խանձայտգութեան ոգի ձգել. ինչպէս
տրդէն իրտւամբ ըսած է Սէն-Մարգէն
'ի գործս լըպոյի:

Նոյնպէս պէտք է գգուաւոր աչք
մ'ունենալ գրութեան միւս պարա-
գայից վրայ, եթէ գրելոյն առթիւն և
թէ անոր նկատմամբ որուն կ'ընծայուի
գրութեան: Պատմագրութեան մէջ աչ-
քի կը զարնէ Բագրատունեաց չափա-
զանց առաւելութիւն, կը հակառակի
անոնց՝ որոնք անշուշտ ըստ հին յար-
գելի աւանդութեան, գրատարտունիս
'ի Հայկապետրած կը համարէին. և ինքն
անոնց ցեղն երայցեցի ազնուականէ մը
եղած կը համարի՝ զոր Նաբուքոդոնո-
սոր գերեր էր: Այս ազգաբանութիւնս
քրիստոնէութենէն վերջ ելաւ. Բա-
գրատունեաց վրացի ճիւղն ուշ ատեն
Դաւիթ և Սպանտիազ երկու եղբայր-
մէ սերեալ կարծուեցաւ, որոնք Դաւիթի
և Ուրիայի կնոյ բերսաբէի սերունդ
էին: Եթէ օտար երեսայ մեզի որ ազ-

Այս տեղ բաւական պատճառ չունենք աւելի Բուզանդայ հաւատալու քան Խորենացւոյն. որով
հետեւ չենք կրնար համոզուիլ թէ այնպիսի անձ մը գիտունք ունենայ ամեն ոչինչ բանով Բա-
գրատունեաց ցեղին փառք փնտռել և Մամիկոնեանց նուազագոյնը. առ առաւելն կրնանք
ըսել թէ ըստագրէ և Բագրատունեաց պատմութեան վրայ շոխանալ և միւս ցեղից նուազ մտա-
գրութեան ըրեր է:

1 Համազասպայ Մամիկոնեանի Ս. Սահակայ դստերն փեսայանալն ծանօթ զէպք է ազգային
պատմութեան մէջ, անոր համար ալ շատ պատմագիրներէն մտադրութեամբ յիշուած է: Ինչպէս
Սփէր Հայկունի. Զ. էջ 123. « Իսկ սորոյն Սահակայ Պարթևի ոչ գոյր որդի, բայց դուստր մի,
որուն անունն էր Սահակայոյն: Եր տուաւ յամուսնութիւն Համազասպայ առեալն Մամիկոնի որ-
դոյ Մանուէլի: Որ եղին 'ի Համազասպայ Սուրբն Վարդան և պանդելին Հմայեակի. և 'ի ծա-
նօթութեան. « Համազասպայ որդոյ Մանուէլի Մամիկոնեանից տեառն: Եւ լինէր 'ի Համա-
զասպայ սուրբն Վարդան և երանելին Հմայեակ, և սքանչելին Համազասպեան օ: Փարպեցին ալ
(ԹԼ). կ'ըսէ « Վան զի ոչ գոյր իւր (սորոյն Սահակայ) արու որդի՝ բայց միայն դուստր մի, զոր էր
առեալն կնութեան Համազասպայ տեառն Մամիկոնեանի և Հայոց սպարապետի, որ ծնաւ 'ի Հա-
մազասպայ երիտ արու որդի, զսուրբն Վարդան և զսուրբն Հմայեակ և զերանելին Համազաս-
պեան»: Ինքնին Խորենացին ալ կը յիշէ Գ. ԺԵ. « Որքեծնութեամբ ինչալ 'ի մեծն Սահակ, զա-
ղարունէ երկ ուստեբաց նորա, ունելով դուստր մի Սահակայոյն կոչեցեալ, որ տուաւ յամու-
սնութիւն Համազասպայ Մամիկոնեանի: Նոյնպէս Վարդան վարդապետեան ալ կը վկայէ, թէ « Սորա
(Ս. Սահակայ) էր դուստր մի միմտր, զոր ապ յամուսնութիւն Համազասպայ Մամիկոնեանի, յոր
մէ ծնաւ սուրբն Վարդան»: Եթէ ըստ գերմանացի փնտաւանիս յանգաւորութիւն է Մովսէսի
Համազասպայ ճիւղագրութիւն չընէ, անշուշտ նոյն յանգաւորութեան մասնակից էր նաև Փար-
պեցին, որուն անկողնամտրութիւնն և արդարական զատասանն անօթաւելի է:

2 Փոխանակ Մանուէլի Մուշեղ գրուած է, արեգք գիտութեամբ թէ անգիտութեամբ չենք
կրնար որոշել:

3 « Առ սովաւ (Հրաշխիւ) ասն կեցեալ զՆաբուքոդոնոսոր արքայ Բաբելոնացոյ, որ գերեաց
զՀրէոյս: Եւ արա ասն զի 'ի գլխաւորաց Երայեցեւոյն դերելոց ինդրեալ 'ի Նաբուքոդոնոսո-
րայ՝ Շամաթ անուն. ամեալ բնակեցոյց մեծաւ պատուով. և 'ի սմանէ ասն պատմագիրն զազգն
Բագրատունի, և հաւատով է... Բանցի ասնին ոմանց անհաւաստի մարդոց, ըստ յօժարութեան
և ոչ ըստ ճշմարտութեան, 'ի Հայկայ զմարգագիր ազգք լինել Բագրատունեաց, զան որոյ ա-
սեմ: Գլ այսպիսեաց յիմար բանից հաւանքի. զի և ոչ մի շախիղ կամ ցուցումս զոչ նմանութեան
յաապաւնագր՝ որ զարգարութիւն անխարիէ. զի 'ի ըստ բանից և անձի իմն յազգս Հայկայ և նմա-
նեացն կակազէ»: Ա. իբ:

նուական մը պարծանք համարի եբրա-
յեցի ծագումն ունենալ, սակայն ա-
րեւելիք քրիստոնեայ աղագայ համար
նոր բան չէ սուրբ գրոց տաւանդութեան
այսպիսի յարում մը, որոնք հռովմէա-
կան կայսերութեան հետ ունեցած վեր
'ի վերոյ վերաբերութեամբ հանդերձ՝
իրենց առանձին կեանքն ունէին. Հա-
պէշ թագաւորը ալ պատիւ կը համա-
րին ապօրինաւոր զաւկի մը յաջորդու-
թիւն սեպուիլ, զոր Սաբա թագուհին
Մոգոմմէն ունեցած կը կարծիք: Այս-
պիսի երեւելի ազգաստեղծի մը փառքը՝
Քաղարատունիք միայն արատով մը ա-
ղօտացուցին, որ մասամբ ամբողջ ազ-
գին վրայ կ'ընկնայ. հնուց 'ի վեր
հրէայք էին և կրցան ժամանակաւ նախ.
նեաց կրօնքէն յետ կենալ, մինչդեռ
յետ քրիստոնէութեան յայտնի ալ ոչ
ոչ հրէայ կ'ըլլար: Այսպիսի կեդու մը՝
'ի փառս Քաղարատունեաց գրող պատ-
մագրէն ամենայն կարելի փափկու-
թեամբ կ'անարկուի: Մովսէս կը բա-
նեցընէ այն մարդուն զգուշութիւնը որ
ուզելով իր երկվարին անզդիական ձե-
տալ և յախորժելով միանգամայն հէգ
անասունը շատ չարկիկէ՝ պոյը մասն
ստուծան և կը կորէ: ա. Արշալ՝ առաջ-
նոյն ատեն՝ Քաղարատայ որդւոցմէ
երկուքն կեանքերնին նուիրեցին հաւա-
տոց համար, այլքն ստիպուեցան շա-
բաթն և լիւիատութիւնը թողուլ: բ.

Տիգրան երկրորդ՝ իրենց զեղապետին
Ասուղին լեզուն կտրել հրամայեց՝ կոտ-
երկրպագութիւն չընելուն համար, ա-
պա Քաղարատունիք ալ թէպէտ ան-
ձամբ զոհելով երկրպագութիւն չը-
րին, բայց յանձն առին թագաւորա-
կան զոհն և խողի միս ուտել: գ. Ար-
շալմ³ առաջարկեց Մնանոսի, որ ազգին
նահապետն էր, կամ թագաւորական
կոոց երկրպագութիւն ընել կամ փայ-
տի վրայ կախուիլ, և գլխարկայ անոր
ազգականը աչքին առջև սպաննեց, և
երբ իր երկու որդիքն ալ պիտի սպան-
նէր՝ հարկադրուեցաւ ազգով հրէու-
թիւնը թողուլ:

Բայց մերկ և լոկ ներքող պիտի չըլ-
լար Քաղարատունեաց զեղին Մովսէսի
գործն՝ այլ և ազգային երկասիրու-
թիւն. արգէն ժամանակին ազգն 'ի
Հայաստան՝ ինչպէս 'ի Լեհաստան՝ ազ-
նուականն էր, որով անհրաժեշտ էր
Հայաստանի ալ Լեհաստանի բաղգին
հանգիպելն. առջի բաժանմամբ (390
թուին) երկրին չորս հինգերորդն Պար-
սից և մէկ հինգերորդն Յունաց ձեռքն
անցաւ. բայց իւրաքանչիւր մասն դեռ
իր առանձին թագաւորն ունէր. եր-
կրորդ բաժանմամբ (417 թուին) իւ-
րաքանիւր տէրութիւն Հայաստանէն
ունեցած մասը խառնեց միացուց իր
երկրին հետ: Դեռ ատեն մ'ալ պար-
սիկ Հայաստանն իր առանձին թագաւ.

1 « Ի սմանէ (յԱրշակայ) նեղեալ որդիք Քաղարատայ վասն զկուսս պատեւելոյ, երկու 'ի նոցա-
նէ սրով կատարեցան արիաբար 'ի վերայ հայրենի օրինաց. զորս ոչ պատկառեմ ասել հետեւող
լինել Ամանեանց և Նշիաղարեանց: Բայց այլքն յանձն առնուն այսպիսի միայն, 'ի շարսթու հեծա-
նել յօրս և 'ի պատերազմութեան, և զմանկունս թողուլ անթիլաթա, յորժամ լինիցին, քանզի ան-
կին էին: Եւ հրամայեցաւ յԱրշակայ մի տալ նոցա կանայս յամենայն նախարարութեանցն, և թէ
ոչ ուխտ պայմանի հաստատուեցնէ՝ թողուլ զլիւիատութիւնն: Զորս յանձն առնուն զերկուսս
զայս միայն, այլ ոչ զերկրպագութիւն կոոց: » Բ. Թ:

2 « Այսպէս մեհեանս շինեալ, և առաջի մեհենիցն բազինս կանգնեալ, զոհս ամենայն նախարա-
րայն հրամայէ մատուցանել հանգեմա երկրպագութեամբ. զոր չառեալ յանձն առցին Քաղարա-
տունեաց, զմիոյ զեղուն հասեալ, որում անուն էր Ասուղ, վասն պատկերացն անաբղութեան, և
ոչ այլ իւրեք խառնանգ. քանզի յանձն առին ուտել 'ի զոհիցն և զմիս խողի, թէպէտ և ոչ ին-
քեանք զոհեցին երկրպագութեամբ: » Բ. Ժգ:

3 « Համայնեաց (Արշալմ) տանջանս պէս պէս 'ի վերայ Մնանոսի կուտել, և վախձան գործոյն,
կամ թողուլ իսպառ պօրէնս հրէութեան և երկիր պագանիւլ արեգական, և պաշտել զկուսս ար-
քայի, ընդ որով հարկին արքայ տացէ նմա զոյն ի իշխանութիւնն, կամ կախել զփայտէ և քնա-
լինել լինել ազգի գորս: Եւ այսպէսով մի յազգականացն առաջի նորս, որում անուն էր Սարայ,
և առ ընթեր զորդինս մատուցեալ 'ի տեղի սպանմանն, որոց անուանքն Սափաւատայ և Աղարկայ,
յերկիւղէ մահուան որդւոցն և 'ի թախանձելոյ կանանց կատարէ զկամս արքայի՝ հանդերձ ամե-
նայն ազգատոհմին, և յառաջին պատիւն իւր հաստատի: » Բ. Իգ:

ւորն ունեցաւ ինչուան 430-թիւն, երբ նորանոր խռովութիւնք երկրին անկախութեան մշտնջենաւոր վերջ տուին: Մովսէսի ժամանակին Հայ ազնուականնի համար՝ անոր պատմութենէն աւելի յարմարը չէր կրնար ըլլալ: Ուստի զարմանալու չէ թէ Մովսէսի երկամարտութիւնն աւելի ազնուականաց պատմ. մտքիւն է քան թէ ժողովրդեան կամ լրութեան ազգին: Մովսէս ալ անկէ աւելին չէր կրնար գրել. և թերեւ այս կ'ուզէ իմացընել առջի գրոց վերջին խօսքերով. « Կատարեցան գիրք առաջին՝ ծննդաբանութեան Հայոց Մեծաց »: Եւ գրեթէ ամբողջ գործոյն կէսն առանձին ազգատոհմից մասնաւոր և սեփական պատմութիւն է: Ենթադրելով ալ թէ Մովսէս ուզէր մեծամեծ բաներ աւանդել, խիստ տալիսկոշակական է թէ արդեօք կ'ըննար. « Գանգի գտանին, ասէ, ... գիր Պարսից և Յունաց, որովք այժմ գիւղից և գաւառաց և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւգրուցաց մատեանք, մանաւանդ որ 'ի սեպհական ազատութեանն պայազատութիւն » (Ա. գ. 4): Ի հակառակէն արքունի տարեգրութիւն կամ յիշատակարան չկար 'ի Հայաստան, և Մովսէս կ'ըսէ. « որք 'ի հօրէն Նաբուգոդոնոսորայ գործք, գրեցան յիւրեանցն յիշողութեանցն վերակացուաց. իսկ մերոցն ոչ այսպիսիին խորհեցելոցն, մնացին նշանակեալ 'ի վեր-

ջինսն (Ա. իա. 4) »: Այս ազնուականաց վերաբերեալ յիշատակարանաց նկատմամբ Հայաստանի անցեալ ժամանակաց աղբիւր մը կայ աւելի դիւրամատոյց թէ խորենացելոյն և թէ անոր ընթերցողաց, ժողովրդական երգք և վիպակ. սակունքիւնք, խորենացիին, այո՛, սատարիկ արհամարհութիւն մը կը ցուցնէ հեթանոս բանաստեղծութեանց նշխարաց համար, բայց արտաքոյ քան զչափն վկայութիւն կ'առնու անոնցմէ. վկայութիւն կը բերէ ժողովրդական վէպերն ալ ու սովորութիւններն: Այս ամենքն ալ խիստ յարգի են, մանաւանդ թէ մէյմէկ պատմական երգեր են. գիտենք որ ժողովրդեան երգն խիստ իրաւամբ 'ի Հայաստան Դոմեո մը մտած կ'աւանդէ¹, զոր խորենացիին կամաւ Դոմեոիանոս կայսեր այլաբանութիւն կարծեց, և սակայն յայտնի յիշատակութիւն մ'է Դոմեոիոս Կորնուդոնի: Ընդհանուր յայտնի է թէ այս երգոց իմաստն աւելի զիցաբանական էր, և մենք չափազանց վերաբերութիւն կը գտնենք այս երգոց և Մովսէսի պատմական դիպաց մէջ, որոց ուղիղ միտքն խարդախուած կարծելու ամեն իրաւունք ունինք: Մովսէս կը զգուշանայ դէպք մը պարզապէս այս հայկական երգոց վրայ հիմնած պատմելու. կ'ախորժի անոնցմէ դուրս գրաւոր աղբիւրներէ քաղել. իսկ այն երգերը՝ միայն զէպքերն աւելի լուսաւորելու ծառայեցնել:

Կը շարունակուի:

¹ Կորնուդոն Կենդան Դոմեոիոս հռովմայեցի զօրավարն Տիրեր, Կորնուդոն Կենդան կայսերաց ժամանակին կ'ապրէր, որով և Տիրիթ վերին Հայոց Թագաւորին ժամանակակից և ոչ Արտաշէս երկրորդին, որ նոյն իսկ խորենացելոյն ժամանակագրութեան կը հակառակի. վասն զի Դոմեոիանոսի դէմ զօրավարող Արտաշէսի որդիքն գեւ վեցամեայ տառնամայ մանկունք կ'ըլլան. ուստի կը հարկենք ըսելու թէ Դոմեոիանոս անունն փոխանակ Տրայիանոսի գրուած է (Բ. ԺԳ). որովհետեւ Տրայիանոսի ժամանակակից է Արտաշէս Բ, և անոր դէմ ալ պատերազմի ելան արքայորդիքն:

